Կարգապահական գործ թիվ 17110

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018թ-ի մարտի 01-ի թիվ 40-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/29-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՅԱՐՓԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի, Տարոն Սիմոնյանի, Հարություն Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Հայարփի Սարգսյանին (արտոնագիր՝ 1926) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

30.08.2017թ. Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան կամ Դիմող)** դատավոր Ա.Գաբրիելյանի «Դատական սանկցիա կիրառելու մասին» 24.08.2017թ. որոշումը **(այսուհետ նաև՝ Որոշում կամ Դատական սանկցիա)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 24.08.2017թ. դատական նիստում պաշտպան Հայարփի Սարգսյանը Դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք, որը պայմանավորված է եղել նրանով, որ վերջինս, առանց նախագահողի թույլտվության, կատարել է անզուսպ հայտարարություններ, բանավեճի է բռնվել Դատարանի հետ, որի կապակցությամբ Դատարանի կողմից նախազգուշացվել է, սակայն, անտեսելով Դատարանի օրինական պահանջը, շարունակել է դրսևորել նույնանման վարքագիծ՝ այդպես շարունակելով անհարկի խոչընդոտել, խաթարել դատական նիստի բնականոն ընթացքը:

Որոշման համաձայն՝ Պատասխանողը նաև խոչընդոտել է Դատարանի օրինական պահանջի կատարումը, որը պայմանավորված է եղել նրանով, որ Դատարանի՝ ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից հեռացնելու պահանջից հետո վերջինս

ձեռքով բռնել է վստահորդի ձեռքերից, վիճաբանության բռնվել ինչպես Դատարանի, այնպես էլ՝ ոստիկանության համապատասխան աշխատակիցների հետ՝ մասնավորապես, փորձելով թույլ չտալ վերջիններիս հեռացնել ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից՝ այդկերպ ըստ էության խոչընդոտելով դատարանի օրինական պահանջի իրականացումը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 15.09.2017թ. թիվ 294-Ա/ԿԳ-17110 որոշմամբ փաստաբան Հայարփի Սարգսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

20.09.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործ նախապատրաստող անձ Սյուզաննա Գրիգորյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանող Հայարփի Սարգսյանը 28.08.2017թ. ներկայացրել է գրավոր դիմում, իսկ 23.10.2017թ. գրավոր բացատրությամբ խնդրել է որպես բացատրություն հիմք ընդունել 28.08.2017թ. դիմումը:

28.08.2017թ. դիմումով վերջինս հայտնել է, որ նշված քրեական գործով դատավարության ժամանակ նախագահող դատավոր Ա. Գաբրիելյանը պարբերաբար զրկում է իրեն խոսքի ազատության, միջնորդություններ, հայտարարություններ, առարկություններ անելու իրավունքից, թույլ չի տալիս իր պաշտպանյալ Հովհաննես Հարությունյանի առողջության և կյանքի վերաբերյալ առաջնահերթ քննության ենթակա միջնորդություն անել, պաշտպանյալի նկատմամբ նույն դատական նիստի ժամանակ կիրառված բռնության վերաբերյալ ևս պաշտպանյալին թույլ չի տվել անել հայտարարություն: Այդպիսով դատավոր Ա. Գաբրիելյանը խոչընդոտում է իր փաստաբանական գործունեությանը և վտանգում է իր պաշտպանյալի կյանքն ու առողջությունը, ինչը քրեորեն պատժելի արարք է: Դատավորն ի սկզբանե անձնավորված և տարբերակված վատ վերաբերմունք է ցուցաբերում իր և իր պաշտպանյալի նկատմամբ՝ ի տարբերություն դատավարության մյուս մասնակիցների, և ակնհայտ է նրա չարությամբ լի միտումնավոր գործողությունների շարանը: 24.08.2017 թվականին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կոպիտ խախտումներով ընթացող (18

ամբաստանյալների ոչ բոլոր փաստաբաններն էին ներկա, ամբաստանյալները ներկա չէին, ուստի՝ փաստաբանները միջնորդել են հետաձգել դատական նիստը, մինչդեռ միջնորդությունը մերժվել է) դռնբաց հերթական դատական նիստի ժամանակ դատավոր Ա. Գաբրիելյանը հրապարակավ կրկին իրեն և պաշտպանյալին զրկել է խոսքի ազատության իրավունքից, որի արդյունքում իր նկատմամբ կիրառել է խայտառակ բովանդակությամբ դատական սանկցիա, որն իր բովանդակությամբ ծաղր է հանդիսանում ողջ փաստաբանական ինստիտուտի նկատմամբ այն դեպքում, երբ ինքը որպես փաստաբան, իրականացրել է փաստաբանական գործողություն, որը խոչընդոտվել է հենց դատավոր Ա.Գաբրիելյանի կողմից, իսկ արդյունքում այդ դատավորի կամայականությամբ հարց է բարձրացվել պատասխանատվության ենթարկել իրեն: Նախորդ դատական նիստերից մեկի ժամանակ նույն դատավորը հրապարակավ նվաստացրել է իր արժանապատվությունը՝ կասկածի տակ դնելով մասնագիտական պատրաստվածությունն այն դեպքում, երբ ինքը հայտարարել է, որ ցանկանում է միջնորդություն ներկայացնել՝ կապված պաշտպանյալի կյանքի և առողջության հետ, որը ենթակա է անհապաղ քննության: 03.08.2017թ. իր պաշտպանյալը ցանկանում էր ինքնաբացարկի միջնորդություն հայտնել, մինչդեռ նույն դատավորը նրա նկատմամբ անհիմն դատական սանկցիա է կիրառել և հերթական անգամ թույլ չի տվել պաշտպանյալին միջնորդություն անել: Այդ օրը դատավոր Ա. Գաբրիելյանի աչքի առաջ իր պաշտպանյալի նկատմամբ ոստիկանության ծառայողների կողմից կիրառվել է բռնություն այն դեպքում, որ բազմիցս ինքը հայտարարել է, որ նա ունի լուրջ առողջական խնդիր, որով պայմանավորված էլ ցանկացել են անել միջնորդություններ, սակայն Դատարանն իրենց թույլ չի տվել: 24.08.2017թ. Դատարանը պաշտպանյալին զրկել է իր նկատմամբ կիրառված բռնության վերաբերյալ հայտարարություն անելու իրավունքից և կարգադրել ոստիկանության ծառայողներին տանել նրան դատական նիստերի դահլիճից, այդ պահին ինքը հանդես է եկել հայտարարությամբ՝ նշելով, որ իր պաշտպանյալին բերել էին նիստերի դահլիճ իր միջնորդությամբ, որպեսզի նա նաև այդպիսի հայտարարություն աներ, ինչը Դատարանի կողմից բավարարվել էր, այդ պահին ոստիկանները փակել էին իր տեսադաշտը, և ինքն ասել է նրանց, որպեսզի մի կողմ քաշվեն, և ինքը կարողանա տեսնել դատավորին և շարունակել խոսքը: Ոստիկաններից մեկը շատ կոպիտ և հրամայական տոնով իրեն ասել է, որ հեռու քաշի իր ձեռքերը, մինչդեռ ինքը ընդամենը նրանց ձեռքով ցույց է տվել, որ տեսադաշտը բացեն, Դատարանն այդ պահին հայտարարել է, որ իր նկատմամբ դատական սանկցիա է կիրառում: Դատական սանկցիայի որոշման մեջ փաստերն աղավաղված են, մասնավորապես, ինքն իր պաշտպանյալի ձեռքերից չի բռնել, դա տեղի է ունեցել 03.08.2017թ., երբ նրա նկատմամբ բռնի ուժ էր կիրառվում, իսկ ինքը դա թույլ չէր տալիս, ուստի՝ ակնհայտ է, որ իր նկատմամբ դատական սանկցիա կիրառելու միտում, փաստորեն, արդեն իսկ առկա է եղել, բացի այդ, դատարանի նախազգուշացումը ինքը չի լսել, քանի որ այդ պահին, ինչպես նշել է, ոստիկաններն իրեն խանգարում էին և անգամ տեսադաշտն էր փակ: Ինքը պաշտպանյալին ընդամենը հարցրել է, թե արդյոք պետք է օգնել նրան, որպեսզի նա կանգնի, նա պատասխանել է, որ ինքնուրույն կկանգնի, մինչդեռ, ոստիկանները չէին համբերում, և քանի որ արդեն իսկ նրա նկատմամբ նույն դատավորի նախագահությամբ տեղի ունեցած դատական նիստի ժամանակ բռնություն

էր կիրառվել ոստիկանների կողմից, ինքը մտավախություն ուներ նրա կյանքի և առողջության համար, ուստի՝ հայտարարել է, որ նրան չիրեն, և նրա նկատմամբ բռնություն չկիրառվի: Իր կողմից նշված ցանկացած փաստ հաստատելու համար կարող է ներկայացնել համապատասխան ապացույցներ, եթե «Ազատություն» ռադիոկայանի տվյալ օրվա ուղիղ հեռարձակումը բավարար չլինի: Բացի այդ, իր նկատմամբ իրականացվել են որոշ հետապնդումներ, ինքը միտում է տեսնում իր նկատմամբ դատավոր Ա. Գաբրիելյանի կողմից տարբերակված վատ վերաբերմունքի մեջ, կարծում է, որ սա հերթական քայլն է իրեն Հովհաննես Հարությունյանի պաշտպանությունից հեռացնելու համար, ակնհայտ է, որ ցանկանում են իրեն արտոնագրից զրկելու հիմքեր ստեղծել: Ցանկանում է տեղեկացնել նաև, որ սույն գործով դատախազները բազմանշանակ ժպիտներ են իրենց թույլ տալիս այն ժամանակ, երբ ինքը խոսում է իր պաշտպանյալի նկատմամբ կիրառվող խոշտանգումներից և, առհասարակ, երբ որևէ հայտարարություն է անում: Խնդրում է ձեռնարկել համապատասխան քայլեր դատավոր Ա. Գաբրիելյանի, նշված դատախազների և ոստիկանության ծառայողների վատ վերաբերմունքն իր նկատմամբ դադարեցնելու ուղղությամբ: Եվ քանի որ, ինչպես արդեն նշել է, իր պաշտպանյալի կյանքին և առողջությանը վտանգ է սպառնում, որի մասին անգամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն է տեղեկացված, որպես ՀՀ փաստաբանների պալատի անդամ՝ ցանկանում է լինել անկախ և օգտվել միջազգային օրենքով իրեն վերապահված լիազորություններից, որպեսզի կարողանա փաստաբանական օգնություն տրամադրել իր պաշտպանյալին, ուստի՝ տվյալ պարագայում իր նկատմամբ դատավոր Ա. Գաբրիելյանի կողմից 24.08.2017թ. կիրառված անհիմն և ակնհայտ միտումնավոր դատական սանկցիայի հիման վրա անգամ կարգապահական վարույթ հարուցելը կդիտարկվի որպես դատավոր Ա. Գաբրիելյանի կամայականության կատարում: Կարծում է՝ Պալատն արժանապատվորեն կպաշտպանի իր անդամ փաստաբանի մարդկային կյանքի համար ամիսներ շարունակ իրականացրած և դեռ շարունակվող պայքարը:

Խորհրդի նիստին Պատասխանողը ներկայացրել է բացատրություն, որում նշել է, որ դատական սանկցիան անհիմն է, և Դատարանը սահմանափակել է Պատասխանողի խոսքի իրավունքը: Պատասխանողի խոսքով, նա բազմիցս փորձել է միջնորդություններ ներկայացնել, առարկել նախագահող դատավորի գործողությունների դեմ և այդպիսով իրականացնել իր վստահորդի պաշտպանությունը, սակայն նրա այդ իրավունքը սահմանափակվել է, Դատարանի կողմից անհիմն զգուշացումներ են արվել, որ չլռելու դեպքում իր նկատմամբ սանկցիա կկիրառվի: Պատասխանողի գնահատմամբ, Դատարանի գործողություններն իրավաչափ չէին, ինքը՝ որպես պաշտպան իրավունք ուներ անել հայտարարություններ, և Դատարանը պարտավոր էր լսել իր ցանկացած հայտարարություն՝ կապված իր պաշտպանյալի իրավունքների ոտնահարման հետ: Ըստ Պատասխանողի՝ ամբողջ դատավարության ընթացքում, այդ թվում՝ տվյալ նիստի ժամանակ Դատարանն իր նկատմամբ տարբերակված մոտեցում է ցուցաբերել և սահմանափակել է իր խոսքի իրավունքը: Տվյալ նիստում Պատասխանողի կողմից արվելիք միջնորդությունն ուներ անհապաղ առաջնահերթություն, քանի որ կապված էր իր պաշտպանյալի կյանքի և առողջության հետ: Պատասխանողը պատրաստվում էր բժշկական եզրակացություն ներկայացնել Դատարանին, որի համաձայն՝ իր

պաշտպանյալը պետք է անհապաղ տեղափոխվեր հիվանդանոց: Պատասխանողը ներկա էր դատական նիստին, սակայն Դատարանի կողմից նրան խոսքի իրավունք չէր տրվում և ցանկացած դեպքում սանկցիա էր կիրառվում, և իր պաշտպանյալը դատական նիստերի դահլիճից հեռացվում էր: Պատասխանողը պնդել է, որ դատական սանկցիայում նշված արարքը չի կատարել, և դա հաստատվում է «Ազատություն» ռադիոկայանի կողմից արված տեսաձայնագրությամբ: 03.08.2017թ. Պատասխանողի նկատմամբ կիրառվել է բռնություն. Դատարանը կրկին սահմանափակումներ է կիրառել Պատասխանողի պաշտպանյալի նկատմամբ, թույլ չի տվել, որ նա դատավորի ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնի, և ոստիկանները նրան բռնությամբ դուրս են բերել դատական նիստերի դահլիճից:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

16.11.2017թ. Նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որի համաձան Նախապատրաստողը գտել է, որ փաստաբան Հայարփի Սարգսյանի գործողությունները տվյալ իրավիճակում չեն կարող դիտարկվել որպես Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտում:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 20.11.2018թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 01.03.2018թ. ժամը 19:00-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, **հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

- Պատասխանող Հայարփի Սարգսյանը թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով ամբաստանյալ Հովհաննես Հարությունյանի պաշպանն է:

- Թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 24.08.2017թ. ժամը 11:00-ին նշանակված դատական նիստին նախագահող դատավորը թույլ չի տվել Պատասխանող Հայարփի Սարգսյանին անել հայտարարություն, իսկ վերջինիս առարկությունն այդ առիթով որակել

է որպես դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք և հեռացել է խորհրդակցական սենյակ Պատասխանողի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու հարցը քննարկելու համար:

Նշված փաստերը հաստատվում են 24.08.2017թ. դատական սանկցիայի որոշմամբ, դատական նիստի ձայնագրությամբ (ձայնագրություն՝ 3 07 2017_ 08_24 13-13-25, որպե՝ 6:27-8:57), Պատասխանողի՝ Պալատին ուղղված 28.08.2017թ. դիմումով և Խորհրդի նիստում ներկայացված բացատրություններով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Հայարփի Սարգսյանը փաստաբան է հանդիսանում 25.04.2015թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ՝ բացի սույն կարգապահական վարույթից, հարուցել է մեկ կարգապահական վարույթ, որը գտնվում է նախապատրաստման փուլում:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հայարփի Սարգսյանի նկատմամբ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճել, հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ*

Կարգի 4-րդ հոդվածի համաձայն՝ *կարգապահական վարույթն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:*

Կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:* **Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝** *եթե կողմը հրաժարվում է (խուսափում է) պատասխանել Նախապատրաստողի հարցերին կամ բացատրություններ տալ, ապա Նախապատրաստողը մյուս կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է անհիմն համարել կողմի հրաժարվելը (խուսափելը)*

պատասխանից և բացատրություններից, իսկ գործի այն փաստական հանգամանքները, որոնց վերաբերյալ կողմը հրաժարվում (խուսափում) է բացատրություն կամ պատասխան տալուց, կարող է համարել ապացուցված: Ամեն դեպքում պատասխանից կամ բացատրությունից Նախապատրաստողի կողմից որպես անհիմն գնահատված հրաժարումը (խուսափումը) մեկնաբանվում է ի վնաս հրաժարվողի (խուսափողի): Սույն կանոնը կարող է կիրառել նաև Պալատի խորհուրդը:

Նույն հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ *եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:*

Վերոնշյալ կանոններից հետևում է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն ընթանում է դիմողի և պատասխանողի մրցակցության սկզբունքի հիման վրա, և վերջիններս կենտրոնական տեղ են զբաղեցնում ապացուցողական գործընթացում: Դիմողի և պատասխանողի կողմից ներկայացվող ապացույցների օբյեկտիվ և բազմակողմանի գնահատման և վերլուծության հիման վրա է Խորհուրդը կայացնում գործն ըստ էության լուծող որոշում՝ համապատասխան իրավական եզրահանգման գալով պատասխանող փաստաբանի կողմից փաստաբանական էթիկայի կանոնների խախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ:

Խորհրդի կողմից պատասխանող փաստաբանի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցի կիրառման հիմքն իրենից ներկայացնում է գործով ներկայացված ապացույցներով հաստատված փաստական հանգամանքների այնպիսի համակցություն, որը ողջամիտ համոզմունք է ձևավորում Խորհրդի մոտ փաստաբանի կողմից Օրենքի և (կամ) Կանոնագրքի պահանջների խախտման վերաբերյալ:

Կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք կվկայեն փաստաբանի կողմից կարգապահական խախտման կատարման մասին: Կողմերից յուրաքանչյուրը կրում է իր պնդումները հիմնավորելու և դրանք հաստատող ապացույցները Պալատին ներկայացնելու պարտականությունը, որը ոչ պատշաճ կատարելու դեպքում կրում է նաև դրա բացասական հետևանքները՝ կարգապահական գործի իր համար ոչ բարենպաստ իրավական ելքի ձևով: Իսկ Պալատը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանիորեն ուսումնասիրելով և գնահատելով կողմերի ներկայացրած ապացույցներն ու փաստարկները, կայացնում է պատճառաբանված որոշում:

Ըստ 24.08.2017թ. Որոշման, Պատասխանողն առանց նախագահողի թույլտվության, կատարել է անզուսպ հայտարարություններ, բանավեճի բռնվել Դատարանի հետ, որի կապակցությամբ Դատարանի կողմից նախազգուշացվել է, սակայն, անտեսելով Դատարանի օրինական պահանջը, շարունակել է դրսևորել նույնանման վարքագիծ՝ այդպես շարունակելով անհարկի խոչընդոտել, խաթարել դատական նիստի բնականոն ընթացքը, խոչընդոտել է Դատարանի օրինական պահանջի կատարմանը, որը պայմանավորված է եղել նրանով, որ Դատարանի՝ ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից հեռացնելու պահանջից հետո վերջինս ձեռքով բռնել է վստահորդի ձեռքերից, վիճաբանության բռնվել ինչպես Դատարանի, այնպես էլ ոստիկանության

համապատասխան աշխատակիցների հետ՝ մասնավորապես, փորձելով թույլ չտալ վերջիններիս հեռացնել ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից՝ այդկերպ ըստ էության խոչընդոտելով դատարանի օրինական պահանջի իրականացմանը:

Խորհուրդն արձանագրում է, որ սույն կարգապահական գործում առկա ապացույցներով, այդ թվում 24.08.2018թ. դատական նիստի ձայանգրառման կրիչով, չի հիմնավորվում Դիմողի կողմից փաստաբանին վերագրվող վարքագիծը: Դիմողը չի ներկայացրել իր փաստարկները հիմնավորող ապացույց, չնայած ունեցել հնարավորություն ապացույցներ ներկայացնելու համար: Դիմողը չի ներկայացել նաև Խորհրդի նիստին, որտեղ ևս կարող էր ներկայացնել գործի համար էական նշանակություն ունեցող ապացույցներ: Հետևաբար, Դիմողի կողմից վկայակոչված հանգամանքները՝ համարվում են չապացուցված:

Վերոնշյալ հանգամանքների հաշվառմամբ, Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման, քանի որ չի հիմնավորվել Պատասխանողի կողմից Կանոնագրքի 4.1 կետի պահանջները խախտելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 15.09.2017թ. թիվ 294-Ա/ԿԳ-17110 որոշմամբ փաստաբան Հայարփի Սարգսյանի (արտոնագիր՝ թիվ 1926) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյան

01 մարտի 2018թ.
թիվ ԿԳ/29-Ա

ք. Երևան